

«2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 7-ՐԴ ՇՐՋԱՆԻ

IV ՓՈՒԼ

«2016 թվականի ՀՀ լավագույն հաշվապահ» մրցույթի չորրորդ փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Հարցաշարի յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, իսկ սխալ պատասխանը՝ 0 միավոր: Հարցաշարի բոլոր հարցերին ճիշտ պատասխանելու դեպքում մասնակիցը ընդհանուր հաշվով կվաստակի 10 միավոր:

Խնդրի պատասխանը գնահատվում է 0-ից 20 միավորների միջակայքում: 20 միավորը համարվում է առավելագույնը, 0-ն՝ նվազագույնը:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների թիվը կազմում է 30 միավոր:

Մրցույթի չորրորդ փուլին ներկայացվող հարցաշարի և խնդրի պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2016թ. սեպտեմբերի 18-ը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիր, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանիշով ոսկեպատ շքանշան և վկայական հանձնելու պաշտոնական արարողությունը տեղի կունենա 2017 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

«2016Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ IV ՓՈՒԼԻ

ՀԱՐՑԱՇԱՐԸ

1. ՀՀ ռեզիդենտ ընկերությունը, համաձայն երկկողմ պայմանագրերի, Իրանի Իսլամական Հանրապետությունից ձեռք է բերում ապրանքներ և իրացնում Ռուսաստանի Դաշնությունում գրանցված մեկ այլ կազմակերպության: Տեղափոխման հետ կապված տրանսպորտային ծառայությունը մատուցում է նույն մատակարար Իրանի Իսլամական Հանրապետության ընկերությունը: Նշված գործարքի հետ կապված գումարային հոսքերը կատարվում են ՀՀ ռեզիդենտ ընկերության միջոցով: Նշված գործարքը ՀՀ ռեզիդենտ ընկերության համար կհամարվի որպես՝

ա) արտաքին տնտեսական գործունեություն.

բ) միջնորդական գործունեություն.

գ) ԵԱՏՄ շրջանակներում կատարված գործարք:

2. Ոչ ռեզիդենտ ընկերությունը ՀՀ ռեզիդենտ ընկերության բաժնետոմսեր է ձեռք բերել 20 մլն դրամի չափով և այդ բաժնետոմսերի 25 տոկոսը վաճառել է 10 մլն դրամով մեկ այլ ոչ ռեզիդենտ ընկերության: Որքա՞ն կկազմի ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարը՝

ա) ոչ ռեզիդենտի շահութահարկ չի առաջանա, քանի որ շահաբաժինների իրացումից ստացվող եկամուտը շահութահարկով հարկման ոչ ենթակա գումար է.

բ) կառաջանա ոչ ռեզիդենտի շահութահարկի վճարման գումար 500 հազ. դրամ.

գ) կառաջանա ոչ ռեզիդենտի շահութահարկի վճարման գումար 1000 հազ. դրամ:

3. Ինչպես կազմի ամորտիզացված արժեքով հաշվառվող՝ մինչև մարման ժամկետը պահվող ֆիքսված դրույքով պարտատոմսի հաշվեկշռային արժեքի վրա շուկայական տոկոսադրույքների աճը (ենթադրվում է, որ ֆինանսական ակտիվները չեն արժեզրկվել)՝

ա) կմեծացնի դրա հաշվեկշռային արժեքը.

բ) կփոքրացնի դրա հաշվեկշռային արժեքը.

գ) չի ազդի:

4. Նշվածներից ո՞րը կազմակերպությունում չի դասակարգվի որպես ֆինանսական ակտիվ՝

ա) դրամական միջոցներով մարման ենթակա դեբիտորական պարտքը.

բ) այլ ֆինանսական ակտիվներով մարման ենթակա դեբիտորական պարտքը.

գ) ապրանքների ձեռք բերման համար տրված կանխավճարը.

դ) այլ կազմակերպության կողմից թողարկված բաժնետոմսը:

5. Պատճառված նյութական վնասի փոխհատուցման դիմաց աշխատակցի աշխատավարձից կատարված պահումների արտացոլում՝

ա) Դեբետ 527 «Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»

Կրեդիտ 528 «Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով».

բ) Դեբետ 527, Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով

Կրեդիտ 629 ,Ոչ գործառնական այլ եկամուտներ.

գ) Դեբետ 527, Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով

Կրեդիտ 222, Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով:

6. Ի՞նչ դրույքաչափով են հարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմաների սահմաններում աշխատանքային պայմանագրի շրջանակներում աշխատանքների կատարման հետ կապված փոխհատուցման վճարները՝ բացառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարների:

ա) համարվում են աշխատավարձին հավասարեցվող գումարներ և հարկվում են ըստ եկամտային հարկի հարկման դրույքաչափերի՝ կախված փոխհատուցվող գումարի չափից.

բ) բոլոր փոխհատուցման գումարներ հարկվում են 20 տոկոս դրույքաչափով.

գ) համարվում են նվազեցվող եկամուտներ և եկամտային հարկի մասին օրենքով

սահմանված

կարգով համարվում են նվազեցվող եկամուտներ.

7. Համապարփակ ի՞նչ պատասխանատվության կենթարկվի հարկ վճարողը աշխատանքի ընդունումը գրավոր չձևակերպելու փաստը ՀՀ կառավարության սահմանած կարգով միևնույն տարում երկրորդ անգամ արձանագրրելու դեքում /2 աշխատողի դեպքում՝ դրամական միավորով արտահայտված/՝

- ա) 120 000 դրամի չափով.
- բ) 240 000 դրամի չափով.
- գ) 340 000 դրամի չափով.
- դ) 350 000 դրամի չափով:

8. Շնորհների հետ վերադարձումը կատարվում է հետևյալ կարգով՝

- ա) առաջին հերթին՝ տվյալ շնորհի հետ կապված չմարված հետաձգված (դեռևս եկամուտ չճանաչված) կրեդիտային մնացորդի հաշվին, իսկ այդ մնացորդը գերազանցող մասով վերադարձումը դիտվում է որպես եկամտի ճշգրտում.
- բ) առաջին հերթին՝ ճանաչվում է որպես ծախս, իսկ չմարված հետաձգված (դեռևս եկամուտ չճանաչված) մնացորդը գերազանցող մասով վերադարձումը կատարվում է այդ մնացորդի հաշվին.
- գ) առաջին հերթին՝ տվյալ շնորհի հետ կապված չմարված հետաձգված (դեռևս եկամուտ չճանաչված) կրեդիտային մնացորդի հաշվին, իսկ այդ մնացորդը գերազանցող մասով վերադարձումը դիտվում է որպես ակտիվ.
- դ) առաջին հերթին՝ տվյալ շնորհի հետ կապված չմարված հետաձգված (դեռևս եկամուտ չճանաչված) կրեդիտային մնացորդի հաշվին, իսկ այդ մնացորդը գերազանցող մասով վերադարձումը դիտվում է որպես ծախս:

9. Ինչպե՞ս է սահմանվում ձեռնարկատիրական գործունեության միավորումը՝

- ա) առանձին կազմակերպությունների միավորում մեկ տնտեսական միավորի մեջ՝ որպես հետևանք մի կազմակերպության հետ այլ կազմակերպության միացման կամ մի կազմակերպության կողմից այլ կազմակերպության գուտ ակտիվների և գործառնությունների նկատմամբ հսկողության իրավունքի ձեռքբերման.
- բ) առանձին կազմակերպությունների միավորում մեկ տնտեսական միավորի մեջ՝ որպես հետևանք մի կազմակերպության կողմից այլ կազմակերպության գուտ ակտիվների և գործառնությունների նկատմամբ համատեղ հսկողության իրավունքի ձեռքբերման.
- գ) առանձին կազմակերպությունների միավորում մեկ իրավաբանական անձի մեջ՝ որպես հետևանք մի կազմակերպության կողմից այլ կազմակերպության գուտ ակտիվների և գործառնությունների նկատմամբ նշանակալի ազդեցության ձեռքբերման.
- դ) առանձին կազմակերպությունների միավորում մեկ տնտեսական միավորի մեջ՝ որպես հետևանք մի կազմակերպության հետ այլ կազմակերպության միաձուլման:

10. Նշվածներից որի՞ գծով կազմակերպությունում չի առաջանա հետաձգված հարկային պարտավորություն՝

- ա) ընթացիկ ժամանակաշրջանում ոչ նյութական ակտիվի արժեքը շահութահարկի հաշվարկման

նպատակներով ամբողջապես նվազեցվել է, սակայն հաշվապահական նպատակներով որպես ծախս է ճանաչվել դրա արժեքի 80 տոկոսը, իսկ մնացած մասը կճանաչվի որպես ծախս հետագա տարիների ընթացքում:

բ) ընթացիկ ժամանակաշրջանում կատարված վերագնահատման արդյունքում հիմնական միջոցի արժեքը աճել է, սակայն շահութահարկի հաշվարկման նպատակներով այդ վերագնահատման արդյունքները հաշվի չեն առնվում:

գ) ընթացիկ ժամանակաշրջանում դեբիտորական պարտքը ամբողջապես նվազեցվել է հարկվող շահույթից, սակայն, քանի որ կազմակերպությունը սկսել է, որ հետագա ժամանակաշրջաններում այն կմարվի, դեբիտորական պարտքը հաշվապահական նպատակներով դուրս չի գրվում:

դ) ներդրումային գույքի հաշվեկշռային արժեքը իրական արժեքով վերաչափման արդյունքում նվազել է, սակայն շահութահարկի հաշվարկման նպատակներով այդ վերաչափման արդյունքները հաշվի չեն առնվում:

ԽՆԴԻՐ

,Ա.Ա.Ա.Ե ՍՊԸ-ն հիմնադրվել է 01 փետրվարի 2015թ.-ին: Կազմակերպությունը զբաղվում է խմորեղենի արտադրությամբ, ունի մեծածախ և մանրածախ վաճառք, ինչպես նաև խոհարարական արտադրաքի տեղում սպառում: Կազմակերպությունը հիմնադրված օրվանից աշխատում է հարկման ընդհանուր դաշտում:

2015թ.-ի ընթացքում կատարել է հետևյալ գործարքները.

(խնդրում ներկայացվող բոլոր ծախսերը և եկամուտները ներկայացված են առանց անուղղակի հարկերի)

Հազ. դրամ

	Եկամուտներ	Գումար
1	Ապրանքների մեծածախ իրացումից հասույթ	54000
2	Ապրանքների մանրածախ իրացումից հասույթ	32000
3	Ստացված շահաբաժիններ	2000
4	01.03.2015թ.-ին Անհատույց ստացված սարքավորումներ	56000
5	Արտարժույթով արտահայտված ակտիվների վերագնահատման դրական տարբերություն	1500
6	Գնորդներից գանձված տուգանքներ	1200
7	Արտարժույթով տրված փոխառություններից հաշվեգրված տոկոսային եկամուտ	560

	Նվազեցումներ	Գումար
1	Իրացված արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված՝ փաստաթղթերով հիմնավորված նյութական ծախսեր	63000
2	Փոխառությամբ վերցված գումարների գծով տոկոսային ծախսեր /տարեկան տոկոսադրույքը 26 տոկոս/, փոխառության գումարը ուղղվել է արտադրական ստորաբաժանման աշխատակիցների աշխատարձեք վճարմանը, որից	7500

	- Հաշմանդամներին հաշվարկված աշխատավարձ	300
3	Հարկային պարտավորությունների սահմանված ժամկետում չկատարելու համար տուգանք	20
4	Վարձակալված շինության վերանորոգման գծով կապիտալացված ծախսերի մնացորդային արժեքի դուրսգրում	1680
5	Շուկայում առաջխաղացման նպատակով մարքեթինգի բաժնի ղեկավարին Մոսկվա գործուղման փաստաթղթերով չհիմնավորված ծախսեր՝ 12 օրվա համար	1530
6	Հայաստանի տարածքում կատարված գովազդի գծով ծախսեր՝ ծառայությունը մատուցվել է Վրաստանում գրանցված կազմակերպության կողմից	560
7	Ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց տրամադրած գումար	430

Լրացուցիչ տեղեկություն

Մանրաձախ վաճառքի արդյունքում ստացված եկամտի 25 տոկոսը վերաբերում է խոհարարական արտադրանք տեղում սպառմանը:

Համապատասխան հաշվարկների հիման վրա որոշել Ընկերության 2015թ.-ի հարվող շահույթը, շահութահարկի գումարը և հաջորդ տարվա շահութահարկի եռամսյակային կանխավճարների գումարը:

ՊԱՏԱՍԽԱՆ

հազ. դրամ

	Եկամուտներ	Ֆինանսական	հարկային
1	Ապրանքների մեծածախ իրացումից հասույթ	54000	54000
2	Ապրանքների մանրածախ իրացումից հասույթ	32000	24000
3	Ստացված շահաբաժիններ	2000	2000
4	01.03.2015թ.-ին Անհատույց ստացված սարքավորումներ	56000	16800
5	Արտարժույթով արտահայտված ակտիվների վերագնահատման դրական տարբերություն	1500	-
6	Գնորդներից գանձված տուգանքներ	1200	1200
7	Արտարժույթով տրված փոխառություններից հաշվեգրված տոկոսային եկամուտ	560	560
Ընդամենը եկամուտ		147270	98560

	Նվազեցումներ	Գումար	հարկային
1	Իրացված արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված՝ փաստաթղթերով հիմնավորված նյութական ծախսեր	63000	57172
2	Փոխառությամբ վերցված գումարների գծով տոկոսային ծախսեր /տարեկան տոկոսադրույքը 26 տոկոս/, փոխառության գումարը ուղղվել է արտադրական ստորաբաժանման աշխատակիցների աշխատարձեր	7500 300	26175 6283 408

	վճարմանը, որից - Հաշմանդամներին հաշվարկված աշխատավարձ		
3	Հարկային պարտավորությունների սահմանված ժամկետում չկատարելու համար տուգանք	20	-
4	Վարձակալված շինության վերանորոգման գծով կապիտալացված ծախսերի մնացորդային արժեքի դուրսգրում	1680	-
5	Շուկայում առաջխաղացման նպատակով մարքեթինգի բաժնի դեկավարին Մոսկվա գործուղման փաստաթղթերով չհիմնավորված ծախսեր՝ 12 օրվա համար	1530	1388
6	Հայաստանի տարածքում կատարված գովազդի գծով ծախսեր՝ ծառայությունը մատուցվել է Վրաստանում գրանցված կազմակերպության կողմից	560	508
7	Ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց տրամադրած գումար	430	-
8	Ստացված շահաբաժիններ	2000	2000
	Ընդամենը ծախսեր	77020	93934

Պատասխան՝

1. Հարկվող շահույթ՝ 4626
2. Շահութահարկ՝ 925
3. Շահութահարկի եռամսյակային կանխավճար 342